Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-993[6]-24.12.2024,06.02.2025-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 182.10-րդ հոդվածով.

«*Հոդված 182.10. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը*

1. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության պաշտոնատար անձի օրինական պահանջը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ այլ կերպ Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը խախտում կատարած անձի նկատմամբ՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչեւ չորսհարյուրապատիկի չափով:

2. Նույն արարքը, եթե կատարվել է կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ, վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչեւ ութհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2.

1. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 244.24-րդ հոդվածով.

«*Հոդված 244.24. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը*

1. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը քննում է սույն օրենսգրքի 182.10.-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: